ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Լոռի Բերդ **« 24 » դեկտեմբերի 2025թ.**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 12

ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. դեկտեմբերի 24-ին, ժամը՝ 12:00-ին հրավիրված յոթերորդ նստաշրջանի վերջին նիստը:

Նիստը ուղիղ հեռարձակվում է համայնքապետարանի պաշտոնական յութուբյան ալիքով և ֆեյսբուքյան էջով:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու տասներեք անդամները, բացակա էին՝ Վանո Չատինյանը և Կարլեն Վերմիշյանը:

<u>Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:</u>

<u>Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:</u>

Համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

<u>Լսեցին՝</u>

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<u>Զեկ./Արայիկ Ներսիսյան/</u>

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով՝

<u>Ավագանին որոշեց՝</u> հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. յոթերորդ նստաշրջանի վերջին նիստի՝ դեկտեմբերի 24-ի նիստի օրակարգը՝ համաձայն ստորև ներկայացված տեսքի.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ՝ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025 թվականի յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ դեկտեմբերի 24-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. հուլիսի 15-ի թիվ 47-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

3) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի թիվ 20-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

4) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների հավելավճարի կիրառման կարգը և չափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. դեկտեմբերի 25-ի թիվ 78-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը հաստատելու մասին:

7) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին:

8) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ,

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ԹԻՎ 47-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև աշխատակազմի գլխավոր մասնագետի երկու, առաջին կարգի մասնագետի երկու և երկրորդ կարգի մասնագետի մեկ պաշտոն անվանացանկում ավելացնելու առաջարկությունը.

1. **Ավագանին որոշեց՝** հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Առաջարկել Լոռի Բերդ համայնքի ղեկավարին՝ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին Լոռի Բերդ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու առաջարկությամբ:

Ուժը կորցրած ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. հուլիսի 15-ի «Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 47-Ա որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 01-ից:

Սույն որոշումը համայնքային ծառայության անվանացանկի փոփոխության մասով ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություն կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա

Հավելվածը կցվում է:

Լսեցին՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի ԹԻՎ 20-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

Ավագանին որոշեց՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի թիվ 20-Ա հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 01-ից:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

Հավելվածը կցվում է:

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 78-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Համայնքային ծառայությնա մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի բ) կետով և «Տեղական ինքնակառվարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ավագանին որոշեց՝ հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների հավելավճարի կիրառման կարգը և չափերը՝ համաձայն հավելվածի:

Ուժը կորցրած ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. դեկտեմբերի 25-ի թիվ 78-Ա որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 01-ից:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

Հավելվածը կցվում է:

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. /Մարգարիտա Հովսեփյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով՝

Ավագանին որոշեց՝ կատարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի բյուջեում հետևյալ փոփոխությունները համաձայն՝ հավելվածի:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ն/

Հավելվածը կցվում է:

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. /Մարգարիտա Հովսեփյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ, 20-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ հոդվածներով, ինչպես նաև «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, ինչպես նաև հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու նախագծի վերաբերյալ՝ ՀՀ ԱՆ (գլխավոր քարտուղարի 06.12.2024թ. թիվ /06/27.2/49756-2024 գրություն) իրավական ակտերի փորձաքննության գործակալության կողմից տրված պետական փորձագիտական եզրակացությունը՝

Ավագանին որոշեց՝ Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում 2026 թվականի համար տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելվածները կցվում են:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ն/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկ. /Մարգարիտա Հովսեփյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի և 33-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ՝ ՀՀ ԱՆ (գլխավոր քարտուղարի 06.12.2024թ. թիվ /06/27.2/49756-2024 գրություն) իրավական ակտերի փորձաքննության գործակալության կողմից տրված պետական փորձագիտական եզրակացությունը՝

Ավագանին որոշեց՝ հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի բյուջեն՝ համաձայն 1-5 հավելվածների:

Հաստատել համայնքի 2026 թ. բյուջեի եկամուտները՝ համաձայն հավելված 1-ի:

Հաստատել համայնքի 2026թ. բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն Հավելված 2-ի, 3-ի և 5-ի:

Հաստատել համայնքի 2026թ. բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ համաձայն Հավելված 4-ի

Սահմանել, որ.

1) ծախսերի ֆինանսավորումը կատարվում է փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունը,

2) բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարը կարող է կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի 15 տոկոսը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Ն/

Հավելվածները կցվում են:

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ

ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. /Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

Ավագանին որոշեց՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանել՝ 2026 թվականի փետրվարի 10-ը, ժամը՝ 12:00-ն

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ա/

Նիստի փակում:

Ավագանու անդամներ՝

Ներսիսյան Արայիկ Մենժիկի
Վարդումյան Հայկ Վազգենի
Պապիկյան Վահրամ Ռոմիկի
Շահնազարյան Թամարա Էդիկի
Պապյան Հարություն Միշիկի
Չիբուխչյան Արման Հրաչիկի
Ներսեսյան Իրինա Վազգենի
Սիմոնյան Անահիտ Բաբկենի
Մարգարյան Սիլվա Ստեփանի
Գրիգորյան Աննա Հրայրի
Սերոբյան Անի Սամվելի
Գևորգյան Միշիկ Մարտիկի
Ասրյան Աննա Տիգրանի

Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝

Արայիկ Ներսիսյան _____

Նիստը արձանագրեց՝ Անի Մարտիրոսյանը _____

Կ.տ.